



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



» 01 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000005

Ձեռնարկողը՝

«Բաղրամյան բիլդինգ» ՍՊԸ
Ք. Երևան, Բաղրամյան 37-39

Գործունեությունը՝ Բաղրամյան պողոտա 37/39 հասցեում բազմաբնակարան
շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

թիվ ԲՓ 000005

< 22 > 01 2020թ.

**Բաղրամյան պողոտա 37/39 հասցեում բազմաբնակարան շենքերի
կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

«Բաղրամյան Բիլդինգ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝

ք. Երևան Բաղրամյան պողոտա

«Բաղրամյան Բիլդինգ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Բաղրամյան պողոտա 37/39 հասցեում հատկացված հողատարածքում կառուցել բազմաբնակարան շենք:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0,275հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

Տարածքը գտնվում է բնակելի և հասարակական շենքերի հարկանությամբ, տարածքում բացակայում է ազատ հողածածկը:

Տարածքում գոյություն ունեն 1-2 հարկանի տներ, որոնց քանդման արդյունքում կառաջանան բետոնային կառույցների, քարի, ապակու և տանիքների թափոններ, որոնց ընդհանուր ծավալը գնահատվում է 1200-1500մ³ սահմաններում: Հողային աշխատանքների արդյունքում հետիցքից հետո կառաջանա 100մ³ գրունտի ավելցուկ: Քանդման թափոնները և գրունտի ավելցուկը կտեղափոխվեն Երևանի քաղաքապետի կողմից հատկացված աղբավայր:

Նախատեսվող բնակելի շենքի կոմպոզիցիան անգլերեն H-աձև ծավալ է, որը պետք է բաղկացած լինի 20 վերգետնյա և 2 տեխնիկական հարկերից: Նկուղային հարկերը ամբողջությամբ ընդգրկում է ավտոկանգառներ 218 մեքենաների համար: Մուտքը դեպի ավտոկանգառներ կազմակերպված է Բաղրամյան փողոցից դեպի ներքին բակից: Վերգետնյա առաջին և երկրորդ հարկերը նախատեսված են հասարակական



օգտագործման համար: Երրորդ հարկից սկսած տեղադրված են բնակարանները: 3
Բնակարաններում ապահովվելու են երկկողմանի օդափոխության համակարգով:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

Հողհատկացման մակերեսը՝ 2750.0մ²

Բնակելի շենքի մակերես՝ 1417.6մ²

Կանաչ տարածքներ՝ 160մ²

Մայրեր՝ 145մ²

Սալիկապատ տարածքներ, որոնք ծառայելու են որպես ներքին ճանապարհներ և
ժամանակավոր ավտոկայանատեղի՝ 1017.4մ²:

Սառը ջրի սնուցումը կատարվելու է քաղաքային ջրմուղի 200մմ տրամագծով ցանցից,
որն անցնում է կից տարածքով: Կոյուղու բակային ցանցը նախատեսվում է միացնել
քաղաքային կոյուղու 500մմ կոլեկտորին, որն անցնում է կից փողոցով:

Շինարարական աշխատանքների տևողությունը 142 շաբաթ է: Տարածքի
նախապատրաստումը՝ 1 շաբաթ, հողային աշխատանքներ՝ 10 շաբաթ, հիմքի
շինարարություն՝ 6 շաբաթ, ինժեներական ցանցերի կառուցում՝ 4 շաբաթ:

Շինարարության ժամանակ բնառեսուրսից օգտագործվելու է ջուր՝ տարածքի
ջրցանի, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու կենցաղային նպատակների
համար: Ջրցանի համար օրական նախատեսվում է օգտագործել օրական 0.4մ³ ջուր, որն
ամբողջ շինարարության համար կկազմի՝ 56-57մ³, խմելու, կենցաղային նպատակների
համար՝ 1.5մ³ օրական, ամբողջ շինարարության համար՝ 1065մ³ ջուր: Մինչև ջրագծերի և
կոյուղու ցանցի միացումը ջուրը կմատակարարվի ընկերության գրասենյակից՝
Բաղրամյան 41 հասցեում, որը գտնվում է անմիջապես շինարարության հարևանությամբ:

Կառուցվող բնակելի շենքի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա
ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական
աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր
արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և
տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում:
Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները
կանխարգելելու նպատակով հայտում ներկայացվել է բնապահպանական միջոցառումների
ծրագիր: Մթնոլորտային օդի պահպանության նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում
իրականացնել ջրցան,

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ
թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը,

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների
տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:

Շինարարության ընթացքում ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման
նպատակով նախատեսվում է.

- բետոնի խառնուրդը բերել պատրաստի վիճակում,

- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևույթային հոսքեր
և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար:

Շրջակա տարածքների պահպանության նպատակով նախատեսվում է
շինարարական նյութերի և քսայուղերի պահեստները տեղադրվել բետոնապատ մակերեսի
վրա, աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած
շինադրը տեղափոխել Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
տարածքը բարեկարգել:



Կառուցապատման ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է շինարարական տեխնիկայի շահագործումը իրականացնել միայն ցերեկային ժամերին, սահմանափակել միաժամանակ աշխատող ծանր տեխնիկական միջոցների /էքսկավատոր, բուլդոզեր/ թիվը:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 180 հազ. դրամ՝ ջրցան միջոցառումների համար ծախսերը կկազմեն՝ 50-60 հազ. դրամ, զգուշացնող վահանակների և ցուցանակների արժեքը՝ 120 հազ. դրամ:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը կբարեկարգվի և կկանաչապատվի:

Պատճառաբանական եզրահանգումներ. Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել է քաղաքաշինության նախարարությունը: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բաղրամյան Բիլդինգ» ՍՊԸ կողմից ներկայացված Բաղրամյան պողոտա 37/39 հասցեում նախատեսվող բազմաբնակարան շենքի կառուցապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Հ. Ալեքսանյան